Կազմված է «28» ապրիլի, 2021թ.

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«ԱՐԱՐՈՒՄ» ՍՈՑԻԱԼԱԿԱՆ
ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ
ՀԻՄՆԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԻՄՆԱԴԻՐՆԵՐԻ
28.04.2021 Թ. ԹԻՎ 1 ՈՐՈՇՄԱՄԲ

Հիմնադրամի գործադիր տնօրենի ժ/պ՝
Արամ Թորոսյան

_____

Տպագրված է ընդամենը ____ օրինակ
Բաղկացած է ____ թերթից
Օրինակ __

ԳՐԱՆՑՎԱԾ Է

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ
ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ
ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ԿՈՂՄԻՑ

«___» «_____» 2021 թ.

Գրանցման համար՝
_____

ՀՎՀՀ ՝
_____

Աշխատակից՝
_____

«ԱՐԱՐՈՒՄ» ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Երևան, 2021

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. «Արարում» սոցիալական մշակութային հիմնադրամը (այսուհետ նաև՝ Հիմնադրամ) հիմնադիրների կողմից կամավոր գույքային վճարների հիման վրա ստեղծված և անդամություն չունեցող ոչ առևտրային կազմակերպություն է, որը հետապնդում է կրթական, սոցիալական, գիտական, բարեգործական, մշակութային և այլ հանրօգուտ նպատակներ: Հիմնադրամը հիմնադրվել է հիմնադիրների 2021թ. ապրիլի 28-ի թիվ 1 որոշմամբ և գործում է ՀՀ Սահմանադրությանը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքին, «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքին (այսուհետ նաև՝ Օրենք), ՀՀ միջազգային պայմանագրերին, իրավական այլ ակտերին և սույն կանոնադրությանը համապատասխան:

1.2. Հիմնադրամի գործունեությունը հիմնված է օրինականության, հրապարակայնության, ինքնակառավարման, իրավահավասարության և կամավորության սկզբունքների վրա:

1.3. Հիմնադրամի անվանումն է.

- *Հայերեն լրիվ* ՝«Արարում» սոցիալական մշակութային հիմնադրամ,
- *Հայերեն կրճատ* ՝«Արարում» հիմնադրամ,
- *Ռուսերեն լրիվ* ՝Социально-культурный фонд “Созидание”,
- *Ռուսերեն կրճատ* ՝Фонд «Созидание»,
- *Անգլերեն լրիվ* ՝“Creation” Sociocultural Foundation,
- *Անգլերեն կրճատ* ՝“Creation” Foundation:

1.4. Հիմնադրամի գտնվելու վայրն է՝ ՀՀ, ք. Երևան 0010, Տիգրան Մեծի պող., 4 շենք, տարածք 4/7:

1.5. Հիմնադրամի հիմնադիրներն են *Արամ Սուրենի Թորոսյանը* (ՀՀ քաղաքացի, նույնականացման քարտ՝ 001808385, տրված՝ 14.03.2014թ., 004-ի կողմից, հասցե՝ ՀՀ, ք. Երևան 0056, Գայի պողոտա 10 շենք, բն. 17) և *Մարտիրոս Անդրանիկի Ավետիսյանը* (ՀՀ քաղաքացի, նույնականացման քարտ՝ 000270850, տրված՝ 19.11.2012թ., 009-ի կողմից, հասցե՝ ՀՀ, ք. Երևան 0020, Վարդաշեն, 5-րդ փողոց, 1-ին նրբանցք, տուն 29):

1.6. Հիմնադիրները պատասխանատվություն չեն կրում իրենց կողմից ստեղծված Հիմնադրամի պարտավորությունների համար: Հիմնադրամը պատասխանատվություն չի կրում իր հիմնադիրների պարտավորությունների համար:

1.7. Հիմնադրամը, համաձայն Օրենքի, պարտավոր է ամեն տարի հաշվետվություն հրապարակել իր գործունեության մասին:

1.8. Հիմնադրամն իրավաբանական անձ է և ստեղծված է համարվում օրենքով սահմանված կարգով պետական գրանցման պահից: Հիմնադրամը կարող է ունենալ տարբերանշանով, անվանմամբ կնիք, կարող է ունենալ դրոշմներ և բլանկեր, խորհրդանիշ, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով գրանցված ապրանքային, առևտրային և այլ նշաններ ու անհատականացնող այլ ռեկվիզիտներ: Հիմնադրամն իրավունք ունի օրենքով սահմանված կարգով բացելու բանկային հաշիվներ Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների բանկերում՝ Հայաստանի Հանրապետության դրամով և (կամ) արտարժույթով:

1.9. Հիմնադրամն ինքնուրույն է որոշում իր գործունեության ռազմավարական ծրագրերը:

1.10.Հիմնադրամը, որպես սեփականություն, ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով: Հիմնադրամը կարող է իր անունից կնքել պայմանագրեր, համաձայնագրեր, և այլ գործարքներ, ձեռք բերել ու

իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:
1.11.Հիմնադրամը, սույն կանոնադրությանը համապատասխան, սեփականատիրոջ իրավունքով իրականացնում է իր ունեցվածքի տնօրինումը, օգտագործումը և տիրապետումը:
1.12.Հիմնադրամը Հայաստանի Հանրապետությունում և դրանից դուրս կարող է ստեղծել մասնաճյուղեր և ներկայացուցչություններ, ինչպես նաև հիմնարկներ, որոնք գործում են Հիմնադրամի անունից՝ Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի կողմից հաստատված կանոնադրություններին համապատասխան:
1.13.Հիմնադրամի իրավունքները կարող են սահմանափակվել միայն օրենքով նախատեսված դեպքերում և օրենքով սահմանված կարգով:
1.14.Հիմնադրամի գործունեության ժամկետն անժամկետ է:
1.15.Հիմնադրամն ունի օրենքով չարգելված բոլոր եղանակներով իր իրավունքների պաշտպանության իրավունք:
1.16.Հիմնադրամը ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու համար իրավունք ունի ստեղծելու տնտեսական ընկերություններ կամ լինելու դրանց մասնակիցը:
1.17.Հիմնադրամը սույն կանոնադրությամբ թվարկված նպատակները հետապնդելիս կարող է անձամբ իրականացնել ձեռնարկատիրական գործունեություն, մասնավորապես՝

1.17.1. կրթական գործունեություն արվեստի, ստեղծագործական արվեստի բնագավառում,
1.17.2. կինո- և տեսաֆիլմերի, հեռուստատեսային ծրագրերի արտադրություն,
1.17.3.կինո- և տեսաֆիլմերի, հեռուստատեսային ծրագրերի հետարտադրական գործունեություն,
1.17.4.կինո- և տեսաֆիլմերի, հեռուստատեսային ծրագրերի տարածում,
1.17.5. կինոֆիլմերի ցուցադրում,
1.17.6.այլ մեքենաների, սարքավորանքի և այլ առարկաների վարձույթ և լիզինգ՝ չներառված ուրիշ խմբավորումներում (օրինակ՝ կինոֆիլմերի արտադրության սարքավորանքի),
1.17.7. գրքերի հրատարակություն,
1.17.8.գրքերի մանրածախ առևտուր մասնագիտացված խանութներում,
1.17.9.գրքերի, պարբերական հրատարակությունների հրատարակում և այլ հրատարակչական գործունեություն,
1.17.10.մշակութային օբյեկտների գործունեություն,
1.17.11.մշակութային միջոցառումների կազմակերպում,
1.17.12.ստեղծագործական գործունեություն,
1.17.13. ստեղծագործական, արվեստի, մշակութային և հանդիսադիր ներկայացումների կազմակերպման բնագավառում գործունեություն,
1.17.14.նեղ մասնագիտական գիտելիքների ձեռքբերման այլ դասընթացներ,
1.17.15. լուսանկարչության բնագավառում գործունեություն,
1.17.16.կրթական այլ գործունեություն մշակույթի բնագավառում,
1.17.17.մասնագիտական, գիտական և տեխնիկական այլ գործունեություն՝ չներառված ուրիշ խմբավորումներում,
1.17.18.հեռուստածրագրերի կազմում և հեռարձակում,

1.17.19. կրթության բնագավառում այլ օժանդակ գործունեություն:

1.18. Օրենքով սահմանված գործունեության որոշ տեսակներով Հիմնադրամը կարող է զբաղվել միայն լիցենզիայի առկայության դեպքում՝ լիցենզիա ստանալու պահից կամ նրանում նշված ժամկետում: Եթե լիցենզիայի հատկացման պայմաններում նախատեսված է, որ Հիմնադրամը, բացի լիցենզավորվող գործունեությունից, այլ գործունեությամբ զբաղվել չի կարող, կամ սահմանափակումներ են դրվում գործունեության առանձին տեսակներով զբաղվելու վրա, ապա Հիմնադրամը լիցենզիայի գործողության ժամանակ իրավունք չունի զբաղվելու այլ գործունեությամբ՝ բացառությամբ լիցենզիայով նախատեսվածների կամ այն գործունեության, որոնց մասին նշված է լիցենզիայի մեջ:

2. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳՈՒՅՔԸ

2.1. Հիմնադիրների՝ Հիմնադրամին հանձնված գույքը Հիմնադրամի սեփականությունն է:

2.2. Հիմնադրամը տիրապետում, օգտագործում և տնօրինում է իրեն պատկանող ու իր կողմից ձեռքբերված գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները՝ իր գործունեության նպատակներին ու գույքի նշանակությանը համապատասխան:

2.3. Հիմնադրամը կարող է որպես սեփականություն ունենալ անշարժ և շարժական գույք, դրամական միջոցներ՝ դրամով, արտարժույթով և այլն:

2.4. Հիմնադրամի գույքի՝ ներառյալ ֆինանսական միջոցների գոյացման աղբյուրներն են՝

ա) Հիմնադիրների կողմից իրականացվող ֆինանսական և նյութական (նաև անշարժ և շարժական գույքի տեսքով) ներդրումները,

բ) քաղաքացիների և իրավաբանական անձանց կողմից նվիրատվությունները և նվիրաբերությունները,

գ) Օրենքով չարգելված այլ աղբյուրները:

3. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ, ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ, ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ԽՄԲԵՐԸ

3.1. Հիմնադրամի առաքելությունն է օժանդակել ՀՀ և այլ երկրների սոցիալ-տնտեսական, կրթական և մշակութային զարգացմանը և բարեփոխումների իրականացմանը:

3.2. Հիմնադրամի հիմնական նպատակներն են.

3.2.1. նպաստել գիտական, կրթական, մշակութային, սոցիալական և առողջապահական համակարգերի բարեփոխմանն ու կատարելագործմանը,

3.2.2. աջակցել մեծ կարևորություն ունեցող հանրօգուտ /բարեգործական/ ծրագրերի իրականացմանը,

3.2.3. տրամադրել դրամական և նյութատեխնիկական օգնություն ֆիզիկական և իրավաբանական անձանց:

3.3. Հիմնադրամի շահառուների խմբերն են.

3.3.1. հայ կամ օտարազգի ֆիլմարտադրողները և այլ մշակութային գործիչները,

3.3.2. ՀՀ-ում կամ նրա սահմաններից դուրս գտնվող և ֆիլմարտադրությամբ, արվեստով, կրթությամբ, առհասարակ մշակութային ոլորտով հետաքրքրվող, ինչպես նաև նշված ոլորտներում մասնագիտացած ֆիզիկական անձինք,

3.3.3. ՀՀ կամ օտարերկրյա կրթական, մշակութային, սոցիալական կազմակերպությունները/իրավաբանական անձինք և նշված ոլորտներում գործունեություն ծավալող ֆիզիկական անձինք:

4. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ, ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ

4.1. Հիմնադրամի կառավարման մարմիններն են Հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը և Հիմնադրամի գործադիր տնօրենը:

4.2. Հիմնադրամի կառավարման բարձրագույն և հսկողություն իրականացնող մարմինը Հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդն է (այսուհետ նաև՝ Խորհուրդ):

4.3. Խորհուրդը բաղկացած է 5 (հինգ) անդամից, որոնք իրենց կազմից 2 (երկու) տարի ժամկետով ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ ընտրում են Խորհրդի նախագահին:

4.4. Խորհրդի առաջին կազմին նշանակում են հիմնադիրները՝ միաձայն որոշմամբ:

4.5. Խորհրդի հաջորդական կազմերը նշանակվում են այդ պահին գործող հոգաբարձուների խորհրդի կողմից՝ ձայների պարզ մեծամասնությամբ: Անհնարինության դեպքում Խորհրդի նոր կազմի անդամների նշանակումն իրականացնում են հիմնադիրները՝ միաձայն որոշմամբ: Գործող Խորհուրդը շարունակում է գործել մինչև նոր հոգաբարձուների խորհրդի կազմի ձևավորումը:

4.6. Խորհրդի անդամի թափուր տեղ առաջանալու դեպքում անդամի նշանակումը կատարվում է 4.5. կետով նախատեսված կարգով:

4.7. Խորհրդի անդամները ընտրվում են 2 (երկու) տարի ժամկետով:

4.8. Խորհրդի անդամի լիազորությունը դադարում է ըստ «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքի:

4.9. Խորհրդի անդամի լիազորությունը կարող է դադարել նաև նրա կողմից իր պարտականությունները պատշաճ չկատարելու դեպքում՝ Խորհրդի մնացած անդամների ձայների առնվազն 3/4 -ով:

4.10. Խորհրդի իրավասությունները սահմանվում են «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքով:

4.11. Խորհրդի իրավասություն հանդիսացող հարցերը Կանոնադրությամբ չեն կարող փոխանցվել այլ մարմնի:

4.12. Խորհուրդն իրավունք ունի ծանոթանալու Հիմնադրամի բոլոր փաստաթղթերին:

4.13. Խորհուրդը վերահսկողություն է իրականացնում Հիմնադրամի գույքի նպատակային օգտագործման, ինչպես նաև Հիմնադրամի գործադիր տնօրենի գործունեության նկատմամբ:

4.14. Խորհուրդն իր գործունեությունն իրականացնում է նիստերի միջոցով: Քվեարկության ժամանակ Խորհրդի յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայն: Նիստերը կարող են անցկացվել էլեկտրոնային փոստի կամ կապի այլ միջոցների կիրառմամբ: Նիստերը գումարվում են ոչ պակաս, քան տարին մեկ անգամ՝ Խորհրդի նախագահի կողմից: Խորհրդի արտահերթ նիստերը հրավիրվում են Խորհրդի նախագահի նախաձեռնությամբ կամ Խորհրդի անդամների 1/3-ի պահանջով: Խորհրդի նիստերը համարվում են իրավազոր, եթե դրանց մասնակցում է Խորհրդի անդամների ընդհանուր թվի կեսից ավելին: Խորհրդի որոշումներն ընդունվում են նիստին մասնակցող անդամների ձայների մեծամասնությամբ, եթե Հիմնադրամի կանոնադրությամբ ձայների ավելի մեծ քանակ նախատեսված չէ:

4.15. Խորհրդի նախագահի ընտրության և ազատման, Հիմնադրամի գործադիր տնօրենի ընտրության և պաշտոնից ազատման, ինչպես նաև Հիմնադրամի անվանման փոփոխության, լուծարման և կանոնադրության փոփոխության կամ նոր խմբագրությամբ կանոնադրության

հաստատման մասին որոշումներն ընդունվում են Խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:

4.16. Հիմնադրամի վերակազմակերպումը կարող է կատարվել Խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների որակյալ (2/3) մեծամասնությամբ:

4.17. Խորհրդի նիստերն արձանագրվում են:

4.18. Արձանագրությունում պետք է նշվեն հետևյալ տեղեկությունները՝

4.18.1. նիստի գումարման տարին, ամիսը, ամսաթիվը և վայրը,

4.18.2. նիստին մասնակցելու իրավունք ունեցող անձանց (այդ թվում՝ կառավարման մարմնի անդամների) քանակը,

4.18.3. նիստին մասնակցած անձանց (այդ թվում՝ կառավարման մարմնի անդամների) քանակը, անունները՝ նշելով Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամի կարգավիճակը կամ Հիմնադրամում զբաղեցրած պաշտոնը,

4.18.4. նիստի օրակարգը:

4.19. Խորհրդի նիստի արձանագրությունը պետք է պարունակի նիստում կայացած ելույթների հիմնական դրույթները, քվեարկության դրված հարցերը, այդ հարցերի վերաբերյալ քվեարկության արդյունքները, նիստին ընդունած որոշումները:

4.20. Խորհրդի նիստերի արձանագրությունները կազմվում են հայերենով: Դրանք կարող են կազմվել նաև օտար լեզվով: Տեքստերի միջև հակասության դեպքում նախապատվությունը տրվում է հայերեն տեքստին:

4.21. Խորհրդի նիստերի արձանագրություններից կազմված քաղվածքները պետք է բովանդակեն տեղեկություններ արձանագրությունը ստորագրած անձանց (այդ թվում՝ հատուկ կարծիք ներկայացրած անձանց) վերաբերյալ:

4.22. Խորհրդի նախագահին ընտրում են Խորհրդի անդամները: Խորհուրդը կարող է ցանկացած ժամանակ վերընտրել նախագահին կամ ընտրել նոր նախագահ՝ իր անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:

4.23. Խորհրդի նախագահի իրավասությունները և պարտականությունները սահմանվում են «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքով:

4.24. Խորհրդի նախագահի բացակայության դեպքում, Խորհրդի որոշմամբ, նրա պարտականությունները կատարում է Խորհրդի անդամներից մեկը:

4.25. Խորհուրդն իր գործունեությունն իրականացնում է իր կողմից հաստատված կանոնակարգին համապատասխան:

5. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

5.1. Խորհրդի անդամն իրավունք ունի՝

5.1.1. առաջարկություններ ներկայացնելու Խորհրդի նիստերի օրակարգի և քննարկվող հարցերի վերաբերյալ,

5.1.2. նախապատրաստելու և Խորհրդի քննարկմանը ներկայացնելու հարցեր, առաջարկություններ և որոշումների նախագծեր,

5.1.3. ստանալու տեղեկություններ Հիմնադրամի գործունեությանը վերաբերող ցանկացած հարցի վերաբերյալ,

5.1.4. ստանալու իր պարտականությունների կատարմամբ պայմանավորված ծախսերի փոխհատուցում,

5.1.5. դուրս գալու Խորհրդից:

5.2. Խորհրդի անդամը պարտավոր է՝

5.2.1. մասնակցել Խորհրդի նիստերին,

5.2.2. իր պարտականությունների կատարման ընթացքում գործել՝ ելնելով Հիմնադրամի շահերից,

5.2.3. հոգալ Հիմնադրամի հեղինակության բարձրացման մասին,

5.2.4. աջակցել Հիմնադրամի ներդրումների համալրմանը,

5.2.5. չխախտել Խորհրդի կանոնակարգի պահանջները:

5.3. Խորհրդի անդամը կարող է ունենալ Օրենքով, սույն կանոնադրությամբ և Խորհրդի կանոնակարգով սահմանված այլ իրավունքներ և կրել այլ պարտավորություններ:

6. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆԸ

6.1. Հիմնադրամի գործադիր մարմինը Հիմնադրամի գործադիր տնօրենն է, որը ղեկավարում է Հիմնադրամի ընթացիկ գործերը և հաշվետու է Խորհրդին:

6.2. Հիմնադրամի գործադիր տնօրենին ընտրում և պաշտոնից ազատում է Խորհուրդը՝ իր ընդհանուր թվի ձայների պարզ մեծամասնությամբ:

6.3. Խորհուրդն իրավունք ունի ցանկացած ժամանակ լուծելու գործադիր տնօրենի հետ կնքված պայմանագիրը՝ Օրենքով, Հիմնադրամի կանոնադրությամբ և տվյալ պայմանագրով սահմանված կարգով:

6.4. Հիմնադրամի գործադիր տնօրենի իրավունքներն ու պարտականությունները սահմանվում են սույն կանոնադրությամբ, «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքով և գործադիր տնօրենի հետ կնքված պայմանագրով:

6.5. Գործադիր տնօրենը.

6.5.1. տնօրինում է Հիմնադրամի գույքը՝ ներառյալ ֆինանսական միջոցները՝ համաձայն Խորհրդի հաստատած բյուջեի, գործարքներ է կնքում Հիմնադրամի անունից,

6.5.2. ներկայացնում է Հիմնադրամը Հայաստանի Հանրապետությունում և օտարերկրյա պետություններում,

6.5.3. գործում է առանց լիազորագրի,

6.5.4. տալիս է լիազորագրեր,

6.5.5. սահմանված կարգով կնքում է պայմանագրեր, այդ թվում աշխատանքային,

6.5.6. բանկերում բացում է Հիմնադրամի ընթացիկ, հաշվարկային (այդ թվում արտարժութային) և այլ հաշիվներ,

6.5.7. Խորհրդի հաստատմանն է ներկայացնում Հիմնադրամի աշխատանքային ներքին կանոնակարգերը, առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների ու Հիմնադրամի կողմից հիմնադրվող տնտեսական ընկերությունների կանոնադրությունները, Հիմնադրամի վարչակազմակերպական կառուցվածքը, հաստիքացուցակը,

6.5.8. իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, կատարման համար տալիս է պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը,

6.5.9. իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությունից և սույն կանոնադրությունից բխող այլ լիազորություններ,

6.5.10. աշխատակիցների նկատմամբ կիրառում է խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցներ,

6.5.11. տարին մեկ անգամ Խորհրդի հաստատմանն է ներկայացնում Հիմնադրամի գործունեության տարեկան հաշվետվությունները:

7. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

7.1. Հիմնադրամի կողմից Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է պետական եկամուտների կոմիտեն, իսկ օրենքով սահմանված դեպքերում՝ նաև այլ իրավասու պետական մարմինները՝ իրենց իրավասություններին և ստուգումների ու ուսումնասիրությունների՝ օրենքով նախատեսված ընթացակարգին համապատասխան:
7.2. Հիմնադրամի կողմից օրենքների պահանջների այնպիսի խախտումներ հայտնաբերվելու դեպքում, որոնք կարող են վերացվել Հիմնադրամի ձեռնարկած միջոցառումներով, վերահսկողություն իրականացնող կամ պետական լիազորված մարմինը Հիմնադրամ է ուղարկում գրավոր նախազգուշացում՝ առաջարկելով խախտումների վերացման կարգն ու ժամկետները:

8. ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ

8.1. Հիմնադրամը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով վարում է հաշվապահական հաշվառում և ներկայացնում ֆինանսական և վիճակագրական հաշվետվություն:
8.2. Հիմնադրամի հաշվապահական հաշվառումը կազմակերպվում ու վարվում, հաշվապահական հաշվետվությունը կազմվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:
8.3. Հիմնադրամը պարտավոր է հրապարակել հաշվետվություն իր գործունեության մասին՝ օրենքով սահմանված կարգով:

9. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

9.1. Հիմնադրամը կարող է վերակազմակերպվել և/կամ լուծարվել «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով:
9.2. Հիմնադրամը կարող է վերակազմակերպվել միայն Հիմնադրամի՝ միացման և միաձուլման ձևով օրենքով նախատեսված կարգով՝ Խորհրդի որոշմամբ:
9.3. Հիմնադրամի լուծարումը նրա գործունեության դադարումն է՝ առանց նրա իրավունքներն ու պարտականությունները իրավահաջորդության կարգով այլ անձանց անցնելու:
9.4. Հիմնադրամը լուծարելու մասին որոշում կարող է ընդունել միայն դատարանը՝ շահագրգիռ անձանց դիմումի հիման վրա: Հիմնադրամի անունից, որպես շահագրգիռ անձ, կարող է հանդես գալ Խորհուրդը:
9.5. Հիմնադրամի լուծարման դեպքում պարտատերերի պահանջների բավարարումից հետո, ինչպես նաև այն դեպքում, երբ լուծարման միջանկյալ հաշվեկշիռը հաստատելու պահին Հիմնադրամը չունի պարտավորություններ պարտատերերի նկատմամբ, գույքն ուղղվում է Հիմնադրամի կանոնադրությամբ նախատեսված նպատակներին, իսկ դրա անհնարինության դեպքում՝ փոխանցվում Հայաստանի Հանրապետության պետական բյուջե:

10. ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ

10.1. Հիմնադրամի կանոնադրության մեջ փոփոխություններ կարող են կատարել ինչպես հիմնադիրները՝ միաձայնությամբ, այնպես էլ հոգաբարձուների խորհուրդը՝ իրենց ընդհանուր թվի ձայների պարզ մեծամասնությամբ:

/Էջի մնացյալ մասը բաց է թողնված/